



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԻՆ

(Հոգեգալստյան տոնի առթիվ)

Քրիստոսի հրաշափառ Հարության խորհրդին նվիրված հիսնօրյա տոնախմբությունը, ըստ եկեղեցական օրացույցի, եկրափակվում է Հոգեգալստյան մեծ և պատմական տոնի կատարմամբ:

Զատիկից մինչև Հոգեգալստու հիսուն օրերի այս շրջանը կոչվում է «Յինունք»:

Հինանց շրջանի առաջին քառասնօրյակը վերջանում է Փրկչի Համբարձման տոնով, որ անփոփոխ կերպով կատարվում է Զատիկի վեցերորդ յոթնյակի հինգշաբթի օրը:

Քառասնօրյա այս ամբողջ շրջանը հիմնականում նվիրվել է հարուցյալ Փրկչի երկրի վրա իր աշակերտների և հետևորդների առաջին խմբերի հետ ունեցած երևումների խորհրդին և հիշատակին (Ա. Կորնթ. ԺԵ 4—8):

Քրիստոսի Համբարձումից մինչև Հոգեգալստյան տոնը երկարող տասը օրերի ընթացքում ևս եկեղեցին ոգեկոչում է փառավորում է հարության և համբարձման հիշատակները: Իսկ Հոգեգալստյան տոնը գալիս է եկրափակելու Հարության նվիրված հանդիսությանց շարքը:

Հոգեգալստյան տոնը կամ Պենտեկոստեն նորակալված Քրիստոնեական եկեղեցու կյանքի մեծագույն և առաջին իրադարձությունն է, որի հիշատակը տոնվում է ամեն տարի Հինանց հիսներորդ օրվա կիրակին:

Հոգեգալստյան տոնի առթիվ եկեղեցին նշում է Ս. Հոգու էջըր Վերնատան մեջ առաքելական դասի վրա, հոգեկան զորության և շնորհների բաշխումով:

«Եւ լցաւ ամենքեան Հոգւով Սրբով, և սկսան խոսել յալլ լեզուս, որպէս և Հոգին տալոյ բարբառել նոցա» (Գործք Բ 4):

Հոգեգալստյան տոնը եկեղեցու Ս. Հոգով մկրտության և հաստատման օրն է:

«Զի Յովհաննէս մկրտեաց ի ջուր, այլ դուք մկրտիցիք ի Հոգին Սուրբ» (Գործք Ա 5):

Քրիստոնեական եկեղեցու պատմության առաջին պատմիչը՝ Ղուկաս ավետարանիչ, իր «Գործք առաքելոց» աշխատության առաջին երկու գլուխներում հանգամանորեն և զեղեցիկ պատկերներով խոսում է Համբարձման և մանավանդ Հոգեգալստյան մեծ դեպքերի մասին:

Օրը կիրակի է, Պենտեկոստեի տոնի հաջորդ օրը: Առաքելական խումբը և առաջին հավատացյալները հավաքվել են Վերնատանը, ուր տեղի ունեցավ Վերջին ընթրիքը և որը դարձել էր նախկին քրիստոնյաների հանդիպման կենտրոնը և Երուսաղեմում քրիստոնեական առաջին եկեղեցին՝ Աշխարհամատուռը, աղոթելու և անձկագին սպասելու «աւետեացն Հօր»:

Ղուկաս ավետարանիչը նկարագրում է Քրիստոնեական եկեղեցու անդրանիկ համայնքի կյանքը, նրա հոգեվիճակը, սերտ միաբանությունը և համագործակցությունը: «Էին հանապազորդեալ միաբան յաղօթս»:

Քրիստոնեական անդրանիկ եկեղեցին, աղոթքի և առանձնության տասը օրերի մեջ, երբ Վարդապետը այլևս մարմնապես իրենց հետ չէր, մտածում էր իր առաքելական գործունեության վրա, զբաղվում էր կապմակերպական առաջին գործերով և անհամբեր սպասում Քրիստոսի աշուտ խոստման կատարման Ս. Հոգու առաքման մասին (Յովհ. ԺԴ 26):

Հրեա համայնքը նույնպես, Պասեքից հիսուն օր հետո, կատարել էր Պենտեկոստեի տոնը, որպես «հիսնօրյա տոն կամ տոն Հինանց»:

Հրեա ժողովուրդը Պենտեկոստի տոնը կատարում էր ի հիշատակ Սինա լեռան վրա Մովսիսական օրենքի տվելության: Այս տոնը հրեաների մոտ միաժամանակ էր «տօն երախայրեաց հնձոց» (Ղևտ. ԻԳ 10):

Հոգեգալստյան օրը Աստված Եկեղեցուն՝ նոր Իսրայելին ուղարկեց «մխիթարիչն ՎՀոգին ճըմարտութեան»:

Հոգեգալուստը տվելության օր է, օրենքի տեղ հոգու, գրի տեղ՝ շնորհաց տվելության օր:

Քրիստոնեական Եկեղեցին դավանում է Ս. Հոգու անսկանությունը. «Որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յԱւետարանս»:

Քրիստոնեական Եկեղեցին, առաքելական օրերից, նշել է Ս. Հոգու գալստյան տոնը: Այսօր էլ քրիստոնեական բոլոր եկեղեցիները, Ջատկից 50 օր հետո, հանդիսութեամբ տոնում են Հոգեգալստյան հիշատակը:

Մեր Եկեղեցին, սակայն, ավելի մեծ հանդիսություն է տվել Հոգեգալստյան տոնին:

Ներսէս Շնորհալին, Հայ Եկեղեցու այդ մեծ բարեկարգիչ հայրապետը, տնօրինել է, որ մի ամբողջ յոթնյակի ընթացքում, տոնվի Հոգեգալուստը, հակառակ այն իրողության, որ այդ յոթնյակը Եղիական պահի և կամ «ամարան աղուհացքի» ջրջանն է:

«Յայս վեց օրս Սուրբն Ներսէս Շնորհալի կարգեաց տօնել ՎՏօն Հոգւոյն Սրբոյ գալստեան և պարդարեաց երգօք և ընթերցուածովք» (Գիրք ճաշոց, Վաղարշապատ, 1872, էջ 474):

Արդարև, Հոգեգալստյան կիրակին առանձին շքով է տոնում Հայ Եկեղեցին, թեև տաղավար է այդ օրը: Օրվա հանդիսավոր սուրբ պատահարի ընթացքում ընթերցվում են «Աղերս Եւթաղեայ» և Հովհան Ոսկեբերան հայրապետի երեք մեծ աղոթքները Ս. Հոգուն նվիրված:

Երեկոյան ժամերգության ժամանակ ընթերցվում է Ներսէս Լամբրոնացու հոյակապ ճառը Ս. Հոգուն նվիրված՝ «Ներբող ի գալուստ ամենասուրբ Հոգւոյն Սրբոյ» վերնագրով, որն սկսվում է «Ստիպիմ ի սիրոյ» բառերով:

Ս. Հոգին անձնավորում է աստվածային հմաստությունը, աստվածային շնորհները, որոնցով ղեկավարվում է Եկեղեցին:

Լամբրոնացին իր վերոհիշյալ ներբողի մեջ գրում է.

«Յայսմ առաւօտու հայեցաւ Հայրն երկնաւոր ի յերկիր, արբոյց զսա յորդառատ գետով Ս. Հոգւոյն... Եկն Ս. Հոգին և բնակեցաւ ի սիրտս առաքելոց և լուսաւոր արար զլայնութիւն և

զերկայնութիւն առաւելութեան սիրոյն Քրիստոսի»:

Լամբրոնացին գեղեցկորեն խոսում է Եկեղեցու կյանքում Ս. Հոգու առաջնորդության մասին. «Եւ որ եկն այլ ո՛չ մեկնեցաւ, այլ մնաց լեկեղեցի Քրիստոսի... որպէս վերակացու և արթուն հրահանգիչ կարգաց Եկեղեցւոյ և որոշիչ իւրաքանչիւր աստիճանաց և պատուոյ»:

Քրիստոնեական Եկեղեցին երկհապարամյա իր պատմությունը անցավ Ս. Հոգու ղեկավարությամբ և առաջնորդությամբ: Վասնզի նա՛ է, որ «քննէ վստրս Աստուծոյ», նա՛ է, որ իր կենդանարար պորությամբ «վամենայն պարգևս ի մեզ ծաղկեալ և աճեցեալ, որ ձեռնադրես առաքելս, լցուցանես մարգարէս, ուսուցանես վարդապետս, բարձրացուցանես համերս և բանաս զփակեալ ականջս խլից» (Նարեկացի):

Մեծ է Ս. Հոգու ազդեցությունը, դերը նաև քրիստոնյայի անհատական կյանքում: Ս. Հոգու կնիքը քրիստոնյան ընդունում է Դրոշմի խորհրդի պահին. «Կնիքս աստուածային սիրտսուրբ հաստատեցցէ ի քեզ և հոգի ուղիղ նորոգեցցէ ի փորի քում» (Մաշտոց): Ս. Հոգու կնքումով հավատացյալի կյանքը աճում է ու բացվում աստվածային լուսին, որովհետև հավատացյալը տաճար է Աստուծո. «Հոգի Աստուծոյ բնակեալ է ի մեզ», — գրում է Պողոս առաքյալը:

Մարդը ստեղծվել է կատարելության համար. նա բնակարան է Աստուծո:

Հռոմայեցվոց գրած իր թղթի մեջ Պողոս առաքյալը շեշտում է, որ մարմնի խորհուրդը մահ է, իսկ «խորհուրդ հոգւոյ՝ կեանք և խաղաղութիւն»: Ի՞նչ օգուտ է մարդու համար եթե ամբողջ աշխարհը շահի, բայց կորցնի իր հոգին:

Այսօր բովանդակ աշխարհը իր տագնապների, պայքարների մեջ, ավելի քան երբևէ կարիքն ունի հոգեկան, բարոյական մաքրավարդման, «ընդունող, սրբող, լցուցիչ, աստուածացուցիչ, նորոգող և կենդանարար Ս. Հոգու» պորության և շնորհների:

Հոգեգալստյան այս տոնին, մի անգամ ևս Լամբրոնացու հետ աղոթենք Ս. Հոգուն, որ Նա միշտ մնա մեզ հետ, մեր ուրախության, վշտի, աշխատանքի և խորհրդի կյանքի մեջ, առաջնորդելով մեզ դեպի առաքինություն, դեպի սրբություն, դեպի հոգևոր կատարելություն:

«Է՛ջ այժմիկ սիրոյ աղբիւր՝ սիրով առ մեզ և մխիթարեմ՝ պորս ի պանդխտութեան վայրն՝ նժդեհ և անցաւոր կենօք տառապին» (Լամբրոնացի):

